

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/4

13 հունվարի 2015 թ.

Քննարկվեց «Սոնա-Ելենա» ՍՊԸ 18.12.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 21.10.2014 թ-ի թիվ 6100232 ակտի դեմ:

«Սոնա-Ելենա» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ ընթացիկ հսկողության 2-րդ բաժնի աշխատակիցները սույն թվականի հոկտեմբերի 10-ին՝ ուրբաթ օրը, այցելել են «Սոնա-Ելենա» ՍՊԸ-ի արտադրամաս, գրառել ներկա գտնվող աշխատողների ցուցակը: Հաջորդ օրը «Սոնա-Ելենա» ՍՊԸ հաշվապահ-պատասխանատուին (այսուհետ նաև բողոքաբեր) հրավիրել են Շենգավիթի ՀՏ ընթացիկ հսկողության 2-րդ բաժնի պետի մոտ, որտեղ բացատրություն են վերցրել չգրանցված աշխատողների վերաբերյալ, առաջարկելով բացատրության ամսաթիվը նշել 13.10.2014թ., պատճառաբանելով, որ իզուր դրա համար այդ օրը չգան արտադրամաս:

Նույն օրը՝ 11.10.2014թ., փոստով ընկերության գործունեությունը 13.10.2014թ-ից դադարեցնելու մասին դիմում է ներկայացվել Շենգավիթի ՀՏ: 2014թ. հոկտեմբերի 13-ին բողոքաբերին կրկին հրավիրել հարկային տեսչություն, որտեղ տեղեկացրել են, որ պետք է տուգանք գրեն չգրանցված աշխատողների գծով: Սակայն, հաշվի առնելով ընկերության գործունեությունը դադարեցնելու հանգամանքը բողոքաբերի մոտ խնդիրներ չեն առաջանա, քանի որ պատասխանատվությունը կրելու է ընկերությունն իր գույքով: Դրանից անմիջապես հետո բողոքաբերին ներկայացրել են Շենգավիթի ՀՏ պետի 13.10.2014թ. թիվ 6100232 հանձնարարագիրը, որով հանձնարարվում էր ընթացիկ հսկողության 2-րդ բաժնի աշխատակիցներին իրականացնել աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում: Բողոքաբերը հավատարիվ աշխատակիցներին, ստորագրել է հանձնարարագիրը: Տեսուչները նույն պահին հարկային տեսչությունում կազմել են թիվ 6100232 ակտի նախագիծը 13.10.2014թ. ամսաթվով: Նույն օրը՝ 13.10.2014թ., 21.10.2014թ. ամսաթվով կազմվել է նաև ակտը, որից հետո դրանք ընկերության կնիքով կնքելու համար այցելել են ընկերության արտադրամաս: Այնտեղ տեսուչները համոզվել են, որ ընկերությունը գործունեություն չի իրականացնում, ոչ մի աշխատող արտադրամասում չէ: Բողոքաբերը կնքել է ակտի նախագիծը և ակտը, որից հետո կնիքը հանձնել է ընկերության տնօրենին:

Նշված ակտով թվով 10 (տաս) վարձու աշխատող ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չլինելու համար կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 5-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցը և վճարման է առաջադրվել 6.000.000 դրամ:

Ըստ բողոքի թիվ 6100232 ակտը կազմվել է օրենքի խախտմամբ: Այսպես.

1. Շենգավիթի ՀՏ պետի թիվ 6100232 հանձնարարագիրը տրվել է 13.10.2014թ.:
2. 13.10.2014թ. ընկերությունը գործունեությանը դադարեցրել է և այդ օրը որևէ գործունեություն ընկերության կողմից չի իրականացվել, ընկերության արտադրամասը փակ է եղել, որևէ աշխատակից այդ օրը և դրանից հետո ընկերությունում չի աշխատել:
3. 13.10.2014թ. ընկերությունում որևէ ստուգում չի կատարվել: Ավելին, ստուգող տեսուչներն ակտի նախագծի և ակտի վրա կնիք դնելու նպատակով այցելել են

արտադրամաս և համոզվել, որ որևէ գործունեություն չի իրականացվում, որևէ աշխատակից աշխատանքի վայրում չէ:

4. 21.10.2014թ. թվագրված ակտը կազմվել և կնիքվել է 13.10.2014թ-ին:

5. Տեսուչների կողմից այսպես կոչված «Ստուգումը» եթե կատարվել է, ապա կատարվել է 10.10.2014թ-ին, առանց ստուգման հիմքի՝ հանձնարարագրի:

6. Ինչպես թիվ 6100232 ակտի նախագծի, այնպես էլ ակտի «Սույն ակտին կցվում են դրա անբաժանելի մասը հանդիսացող» տողում որևէ փաստաթուղթ, հայտարարություն, բացատրություն, հավելվածի մասին նշում առկա չէ և ակտի հետ չի հանձնվել:

Փաստորեն խախտվել են «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը՝ ստուգումն իրականացվում է դրա մասին հանձնարարագրի հիման վրա, ինչպես նաև նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ ստուգում սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը:

Բացի այդ, խախտվել են աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանելու մասին ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 1259 որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետի պահանջները՝ արձանագրությանն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրականացվող ստուգումների արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող ստուգման ակտի անբաժանելի մասն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով բողոքաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 21.10.2014 թ-ի թիվ 6100232 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 13.10.2014 թ-ի թիվ 6100232 հանձնարարագրի համաձայն «Սոնա-Ելենա» ՍՊԸ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 21.10.2014 թ-ի թիվ 6100232 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 6.000.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ «Սոնա-Ելենա» ՍՊԸ-ում թվով 10 (տասը) վարձու աշխատող ձևակերպված չէր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ չեն կատարվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի և 85-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Նշված խախտումների համար կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 6.000.000 դրամ:

Բողոքում բերված այն պնդումների վերաբերյալ, որ 13.10.2014 թ-ին ընկերությունում որևէ ստուգում չի կատարվել, ինչպես նաև «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի և 4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը խախտված լինելու կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

« ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 13.10.2014 թ-ի թիվ 6100232 հանձնարարագրի դարձերեսին կատարված գրառման համաձայն, հանձնարարագրի օրինակը բողոքաբերի կողմից ստորագրությամբ ստացվել է 13.10.2014 թ-ին:

Հանձնարարագրի դարձերեսին կատարված գրառմամբ բողոքաբերը հաստատել է այն հանգամանքը, որ ընկերությունում ստուգումը փաստացի սկսվել է 13.10.2014 թ-ին:

Բացի այդ, բողոքաբերի կողմից 13.10.2014 թ-ին տրվել է գրավոր հայտարարություն (այսուհետ՝ հայտարարություն), որում վերջինս մասնավորապես նշել է, որ 13.10.2014 թ-ին ժամը 11:00-ի սահմաններում Շենգավիթի ՀՏ աշխատակիցների կողմից իրեն է ներկայացվել Շենգավիթի ՀՏ պետի 13.10.2014 թ-ի թիվ 6100232 հանձնարարագիրը: Ըստ հայտարարության, թիվ 6100232 հանձնարարագրի օրինակը ստորագրությամբ բողոքաբերի կողմից ստացվել է, որից հետո սկսվել է հանձնարարագրի շրջանակներում իրականացվող ստուգումը: Հայտարարությունում բողոքաբերը նշել է նաև, որ 13.10.2014 թ-ին ժամը 11:45-ի դրությամբ արտադրամասում առկա էին 22 աշխատակիցներ, որոնցից 10 (տաս) աշխատակիցների աշխատանքի ընդունումը սահմանված կարգով ձևակերպված չէ: Հայտարարությանը կից ներկայացվել է չգրանցված վարձու աշխատակիցների անվանացուցակը:

Հայտարարությունում կատարված գրառման համաձայն, այն գրվել է բողոքաբերի ձեռքով, իր բառերով, որի համար ստորագրել է:

Ստուգումն իրականացնող անձանց կողմից նույն օրը՝ 13.10.2014 թ-ին, կազմվել է «ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259 որոշմամբ հաստատված արձանագրությունը, որում արտացոլվել են վերը նշված 10 (տաս) չձևակերպված աշխատակիցների վերաբերյալ տվյալները: Նշված արձանագրությունը ստորագրված է բողոքաբերի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ վերը նշված փաստական հանգամանքները հիմնավորում են ընկերությունում ստուգումը փաստացի 13.10.2014 թ-ին կատարված լինելու հանգամանքը: Այսինքն, բողոքում բերված պնդումները, որ ստուգումը կատարվել է 10.10.2014 թ-ին առանց հանձնարարագրի առկայության, չի համապատասխանում իրականությանը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերությունում ստուգումն իրականացվել է և դրա արդյունքում Ակտը կազմվել է «ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան»:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

« ՖՆ Շենգավիթի ՀՏ 21.10.2014 թ-ի թիվ 6100232 ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

